

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

Սույն որոշումը վերաբերում է այն աշխատողներին, ովքեր շաբաթվա ընթացքում կատարում են առնվազն երկու ժամ աշխատանք Լոս Անջելես վարչաշրջանի ոչ կորպորատիվ տարածքներում: Գործատուները պարտավոր են վճարել ստորև նշված նվազագույն աշխատավարձը աշխատած բոլոր ժամերի համար:



Այս պատասաղը պետք է փակցվի աշխատավայրերում երևացող և հասանելի տեղում, անզլերեն, իսպաներեն լեզուներով և գործատուի կողմից աշխատողների հետ նրա աշխատանքին վերաբերյալ հաղորդակցվելու առաջնային լեզվով՝ եթե այլ է, քան անզլերենը կամ իսպաներենը:

Լոս Անջելես վարչաշրջանի օրենսգրքի Գլուխ 8.100. Նվազագույն աշխատավարձ

ՀՈՒԼԻՍ 1, 2024 թ.*

\$17.27 ՄԵՎ ԺԱՄԱՎ ՀԱՄԱՐ

*Սկսած 2022թ-ի հունվարի 1-ից Վարչաշրջանի Գլխավոր Գործադիր Պաշտոնակատարը (CEO) կահմանի նվազագույն աշխատավարձի ճշգրտված դրույթաչափերը՝ հիմք ընդունելով Սպառողական Գների Ինդեքսը, որը ուժի մեջ կմտնի 2022թ-ի հուլիսի 1-ից

Աշխատավարձի նախորդ դրույթաչափերը

- 1 հուլիսի, 2023 թ. ... \$16.90 մեկ ժամվա համար (Բոլոր գործատուները)
- 1 հուլիսի, 2022 թ. ... \$15.96 մեկ ժամվա համար (Բոլոր գործատուները)
- 1 հուլիսի, 2021 թ. ... \$15.00 մեկ ժամվա համար (Բոլոր գործատուները)
- 1 հուլիսի, 2020 թ. ... \$15.00 մեկ ժամվա համար՝ 26 և ավելի աշխատակիցներ ունեցող խոշոր գործատուների համար
- 1 հուլիսի, 2020 թ. ... \$14.25 մեկ ժամվա համար՝ 25 կամ ավելի քիչ աշխատակիցներ ունեցող փոքր գործատուների համար

Լոս Անջելես վարչաշրջանի օրենսգրքի Գլուխ 8.100 և 8.101. Վրեժխնդրությունն անօրինական է

Դուք իրավունք ունեք.

- Բողոք ներկայացնել
- Տեղեկացնել ցանկացած անձի իր հնարավոր իրավունքների մասին
- Պահպանել ձեր իրավունքները սույն օրենքի ներքո

Վրեժխնդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետոյալը.

- Ձեզ ազատումը աշխատանքից
- Ձեր վարձատրության նվազեցում
- Խտրականություն ձեր նկատմամբ
- Սպառնալիքներ ձեր կամ ընտանիքի անմիջական անդամների դեմ

Նշում. Գործատուն կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել աշխատողին հարգելի պատճառով. այնուամենայնիվ, կա վրեժխնդրության ենթադրություն, եթե գործատուն չի կարողանում պատճառ ցույց տալ:

Լոս Անջելես վարչաշրջանի օրենսգրքի Գլուխ 8.101. Ծանուցում աշխատակիցներին

Նախնական փոխհատուցման բացահայտման հայտարարություն

Աշխատանքի ընդունման ժամանակ ձեր գործատուն պետք է ձեզ գրավոր հայտարարություն տա, որտեղ կբացահայտվեն հետևյալը:

- Գործատուի անունը, կազմակերպության անվանումը, հիմնական գրասենյակի ֆիզիկական և փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և գործատուի հեռախոսահամարը
- Ձեր վճարման դրույթաչափ(եր)ը և վճարման օրը
- Եթե կիրառելի է, ձեր գործատուի թեյավճարի քաղաքականությունը
- Ձեր վարձատրության հիմքը (ժամավճար, շաբաթական վճար, միջնորդավճար)
- Բանաձևը, որով կարելի է որոշել վարձատրության չափը
- Յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածում ձեր աշխատավարձից արված պահումներ
- Օրենքով պահանջվող ցանկացած լրացուցիչ տեղեկություն

Վճարման քաղվածք

Յուրաքանչյուր վարձատրության օր ձեր գործատուն պետք է ձեզ տրամադրի Կալիֆորնիայի Աշխատանքային օրենսգրքի 226(a)-ի ներքո պահանջվող տեղեկությունները.

- Ստացված համախառն և մաքուր աշխատավարձը
- Արված պահումները
- Աշխատողի աշխատած ժամերի ընդհանուր քանակը
- Վաստակած գործարքային միավորների քանակը (գործավարձով աշխատողների համար)
- Վճարման հիմքը (ժամ, հերթափոխ, օր, շաբաթ, միջնորդավճար)
- Ներառյալ այն ժամանակահատվածի ամսաթիվը, որի համար աշխատողը վարձատրվում է
- Վճարման ժամանակահատվածում գործող ժամային դրույթաչափերը և յուրաքանչյուր ժամային դրույթաչափով աշխատած ժամերի համապատասխան քանակը
- Գործատուի անունը և հասցեն
- Աշխատողի անունը և աշխատողների սոցիալական ապահովության համարի վերջին չորս թվանշանները կամ աշխատողի նույնականացման համարը

Լոս Անջելես վարչաշրջանի օրենսգրքի Գլուխ 8.101. Ձեր իրավունքները պաշտպանված են

Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնելու

Դուք կարող եք բողոք ներկայացնել Սպառողների և կազմակերպության հարցերով զբաղվող դեպարտամենտի՝ Աշխատանքի հավասարության գրասենյակ՝ նվազագույն աշխատավարձի մասին որոշման ենթադրյալ խախտումների համար: Բողոքները պետք է ներկայացվեն ենթադրյալ խախտման դեպքից հետո երեք տարվա ընթացքում:

Դուք իրավունք ունեք դատի տալու

Ցանկացած աշխատող, կազմակերպություն կամ ցանկացած այլ անձ, որը հանդես է գալիս հանրության անունից, և ում իրավունքները խախտվել են սույն օրենքի ներքո, կարող է քաղաքացիական հայց ներկայացնել դատարան այն գործատուի դեմ, ով խախտել է նվազագույն աշխատավարձի մասին որոշումը:

(800) 593-8222



LOS ANGELES COUNTY
**CONSUMER &
BUSINESS AFFAIRS**



Լրացուցիչ տեղեկությունների համար սկանավորեք QR կոդը և պարզեք, թե արդյոք դուք գտնվում եք Լոս Անջելեսի վարչաշրջանի ոչ կորպորատիվ տարածքում:

Էլ. փոստ՝ wagehelp@dcba.lacounty.gov
Կայքէջ՝ workers.lacounty.gov

320 West Temple Street, Room G-10
Los Angeles, California 90012